

Հաստատված է՝

Հայաստանի Հանրապետության

մշակույթի նախարարի

2018 թ. 06 29-ի

թիվ 340-Վ հրամանով

Նախարար՝

Լ. Մակրտչյան



Կազմված է 2018 թ. մայիսի 21-ին և

բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

օրինակ 2-----

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի Մյասնիկյանի տարածքային

բաժնի կողմից 07.02.2003 թ.

Գրանցման համար՝ 273.210.03420

Վկայական 03 Ա 059045

ՀՎՀՀ 01506092

07.02.2003 թ. գրանցված

Կանոնադրության թիվ -----

փոփոխությունը գրանցված է

Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության

աշխատակազմի իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի գործակալության կողմից

«06» 07 2018 թ.



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ»**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2018 թ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 389-Ն որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 886-Ն որոշման 4.1-ին կետի համաձայն կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են՝

ա) գրադարանային գործունեության իրականացումը,

բ) գրական ժառանգության պահպանման, տարածման ու գրավոր մշակույթի զարգացման նպաստավոր պայմանների ստեղծումը,

գ) ազգային և համաշխարհային դասական ու ժամանակակից լավագույն գրական ստեղծագործություններին հանրությանը հաղորդակից դարձնելը,

դ) հայ դասական ու ժամանակակից գրականության հանրահռչակումն օտարերկրյա պետություններում:»:

2) Կանոնադրության 11-րդ կետի ղ) ենթակետից հետո լրացնել ճ), ճա), ճբ), ճգ ենթակետերը հետևյալ բովանդակությամբ.

«ճ) իրականացնում է ընթերցանության խթանմանը նպաստող ծրագրեր,

ճա) համակարգում է լիազորված պետական մարմնի պատվերով և աջակցությամբ գրականության հրատարակման գործընթացը, կազմակերպում է գրողների և գրականության հանրահռչակումը,

ճբ) համակարգում է գրական, մշակութային, ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլին տրվող աջակցության գործընթացը,

ճգ) իրականացնում է լիազորված պետական մարմնի պատվերով և աջակցությամբ լույս տեսած գրականության բաշխման գործընթացը:»:

2. Սույն փոփոխությունները հանդիսանում են «Հայաստանի ազգային գրադարանի պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ գրանցված 200: թվականի փետրվարի 7-ին, անբաժանելի մասը: